

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2013 թվականի N –Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 1864-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 110-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1864-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ.

1.1. Որոշման Հավելված 1-ով հաստատված «Ընտանեկան նպաստի և միանվագ օգնության նշանակման և վճարման կարգ»-ում՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Նպաստ ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող), ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ, դիմում է իր բնակության վայրի գործակալություն՝ ներկայացնելով հայտը՝ համաձայն N 1 ձևի, և ընտանիքի անապահովության գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Հայտը լրացվում է 1 օրինակից՝ ինքնապատճենահանվող թղթի վրա: Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանվում կամ տեսաներածվում են գործակալության աշխատակցի կողմից: Դիմողը կարող է նաև ուղարկել հայտը կից պահանջվող փաստաթղթերի պատճենների հետ միասին փոստով կամ առցանց՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ինտերնետային կայքում տեղադրված հայտի ձևը լրացնելու և պահանջվող փաստաթղթերը ներբեռնելու միջոցով:».

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հայտը՝ անհրաժեշտ փաստաթղթերով, հաշվառվում է հայտի հաշվառման մատյանում՝ համաձայն N 2 ձևի:».

3) 10-րդ և 11-րդ կետեր շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Գործակալության աշխատակիցը, հայտը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում համեմատում է ընտանիքին (ըստ ընտանիքի անդամների) պատկանող (ամբողջ հանրապետությունում) հողամասի հողատեսքի, դրա կադաստրային զուտ եկամտի և հողատարածքի մակերեսի մասին՝ վերջինիս կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ օգտվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական բազայից:

11. Գործակալության աշխատակիցը հայտը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դիմողի անունով՝ ընտանիքի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և (կամ) փաստացի բնակվող բոլոր անձանց մասին, իսկ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում՝ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու մասին տեղեկատվությունը՝ օգտվելով բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայից:».

4) լրացնել 11.1, 11.2, 11.3 և 11.4 կետերով հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Ընտանիքի անդամների թվում հաշմանդամի առկայության դեպքում վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գործակալության պետը առցանց հարցում է կատարում Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

11.2. Ընտանիքի անդամների թվում գործազուրկի առկայության դեպքում վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գործակալության պետը առցանց հարցում է կատարում «Զբաղվածություն պետական ծառայություն» գործակալության համապատասխան տարածքային կենտրոն՝ հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

11.3. Ընտանիքի անդամների թվում կենսաթոշակառուի առկայության դեպքում վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գործակալության պետը առցանց հարցում է կատարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն համապատասխան տարածքային կենտրոն՝ հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

11.4. Ընտանիքի անդամների թվում անհատ ձեռնարկատիրոջ առկայության դեպքում վերջինիս կողմից վճարված հարկերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գործակալության պետը առցանց հարցում է կատարում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:».

5) 12-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Գործակալության աշխատողը ներկայացված փաստաթղթերը համեմատում է հայտում նշված փաստաթղթերի ցանկի հետ, հայտի վրա նշում ստացման ամսաթիվը, ստորագրում և ընդունում է՝ դիմողին վերադարձնելով հայտի ինքնապատճենահանվող օրինակը:».

6) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Եթե հայտի հետ ներկայացվում են ոչ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա գործակալության աշխատողը հայտում կատարում է համապատասխան նշումներ և հայտի ինքնապատճենահանվող օրինակը 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմողին՝ տեղեկացնելով պակասող փաստաթղթերի ցանկի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին:»

7) 15-րդ կետում «դիմում-հայտարարագիրն» բառերը փոխարինել «հայտը» բառով.

8) 16-րդ կետում «դիմում-հայտարարագրում» բառերը փոխարինել «հայտում» բառով.

- 9) 17-րդ կետում «դիմում-հայտարարագրում» բառերը փոխարինել «հայտում» բառով, «անհամապատասխանության» բառը փոխարինել «համապատասխանության» բառով և «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 10) 18-րդ կետի առաջին նախադասությունում «դիմում-հայտարարագրում» բառերը փոխարինել «հայտում» բառով, իսկ երկրորդ նախադասությունում «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 11) 19-րդ կետի առաջին նախադասությունում «դիմում-հայտարարագրում» բառերը փոխարինել «հայտում» բառով, իսկ «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 12) 19-րդ կետի 2-րդ ենթակետում «30 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 13) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
 «21. Գործակալության տվյալ տարածքը սպասարկող աշխատողն ընտանիքի դիմելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տնային այցելություն՝ անապահովության սահմանային մեծության միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմաններն ուսումնասիրելու նպատակով: Տնային այցելությունը կատարում է գործակալության տեսուչը տարածքային ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի հետ միասին: Տնային այցելությունը կատարող գործակալության տեսուչը չպետք է լինի տվյալ ընտանիքի փաստաթղթերը ուսումնասիրող տեսուչը: Տնային այցելության ընթացքում պարտադիր պետք է կատարվեն ընտանիքի բնակության վայրի և պայմանների ֆոտո-/վիդեո-նկարահանումներ, որոնք հետագայում են պահպանվում են նպաստի գործում: Տնային այցելության արձանագրությունը պետք է ստորագրվի գործակալության տեսուչի, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի, ինչպես նաև դիմող ընտանիքի չափահաս անդամի կողմից:».
- 14) 25-րդ կետում սահմանված «3 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 15) 35-րդ կետում սահմանված «մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 16) 36-րդ կետում «հուղարկավորությունը կազմակերպած անձին» բառերից հետո լրացնել «վերջինիս կողմից դիմումը ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 17) 38-րդ կետում «30 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «21 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
- 18) 41-րդ կետում «դիմում-հայտարարագրերի» բառերը փոխարինել «հայտերի» բառով.
- 19) 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝  
 «53. Նույն կազմով նոր բնակության վայր տեղափոխված ընտանիքի նպաստի գործը նախկին բնակության վայրի սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինը փոխանցվում է ընտանիքի նոր բնակության վայրի համապատասխան տարածքային մարմնին՝

պահպանելով նպաստի գործի և դրան կից փաստաթղթերի պատճենները: Նպաստի վճարումը շարունակելու համար իրականացվում է բնակության նոր վայրի տնային այցելություն:»:

20) 55-րդ կետով սահմանված «21-օրյա ժամկետը» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

21) 59-րդ կետի առաջին նախադասությունում «աշխատողը» բառերից հետո լրացնել «տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի հետ միասին» բառերով:

22) Ուժը կորցրած ճանաչել 60-րդ, 61-րդ և 62-րդ կետերը:

23) Լրացնել 81-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«81. Ընտանեկան նպաստի համար դիմողների և/կամ նպաստի իրավունք ստացողների ցուցակները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցրեի նախարարության ինտերնետային կայքում:»:

24) Հավելված 1-ի Ձև 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ձև 1

Սոցիալական ծառայությունների  
Տարածքային գործակալության պետ՝

անուն, ազգանուն

ՀԱՅՏ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏ ԿԱՄ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_

2. Ընտանիքի անդամների թիվը \_\_\_\_\_

N	Անուն, ազգանուն, հայրանուն <sup>1</sup>	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը <sup>2</sup>	Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը <sup>3</sup>	Քաղաքացիություն <sup>4</sup>	Սոցիալական խումբ <sup>5</sup>	Զբաղվածությունը և (կամ) կարգավիճակը <sup>6</sup>	Եկամուտը և (կամ) կենսաթոշակի (դրամական օգնության) կամ
---	---	---	---	------------------------------	-------------------------------	--	---

<sup>1</sup> Տվյալ սյունակում լրացվում են դիմողի և նրա ընտանիքի անդամների անունը, ազգանունը և հայրանունը:

<sup>2</sup> Տվյալ սյունակում լրացվում են դիմողի և նրա ընտանիքի անդամների ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը:

<sup>3</sup> Տվյալ սյունակում լրացվում են դիմողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը:

<sup>4</sup> Տվյալ սյունակում լրացվում են դիմողի և նրա ընտանիքի անդամների քաղաքացիության վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով ՀՀ քաղաքացի/ՀՀ-ում կացության իրավունքի առկայություն/քաղաքացիություն չունեցող/փախստական:

<sup>5</sup> Տվյալ սյունակում լրացվում են տեղեկություններ դիմողի և նրա ընտանիքի անդամների՝ սոցիալական խմբի պատկանելիության վերաբերյալ ըստ հետևյալ խմբերի՝ I խումբ/II խումբ/III խումբ, անչափահաս երեխա, միակողմանի ծնողազուրկ երեխա, առանց ծնողական խնամքի մնացած երեխա, միայնակ մոր երեխա, ամուսնալուծված անձի երեխա, հղի կին, կենսաթոշակատու/միայնակ կենսաթոշակատու/տարեց կենսաթոշակատու:

<sup>6</sup> Տվյալ սյունակում լրացվում են տեղեկություններ դիմողի և նրա ընտանիքի անդամների զբաղվածության վերաբերյալ ըստ հետևյալ դասակարգման՝ գործազուրկ/անմրցունակ գործազուրկ, ուսանող մինչև 23 տարեկան, վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր, արտոնագրային հարկ վճարող ֆիզիկական անձ:

							գործազրկության նպաստի չափը <sup>7</sup>
1.							
2.							
3.							
4.							

---

<sup>7</sup> Տվյալ սյունակում լրացվում են տեղեկություններ դիմողի և նրա ընտանիքի անդամների եկամտի վերաբերյալ, մասնավորապես՝ վարձու աշխատողի համար՝ ամսեկան աշխատավարձը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ միջին ամսեկան եկամուտը, գործազուրկի դեպքում՝ գործազրկության նպատի չափը:

3. Բնակության վայր \_\_\_\_\_

- հաշվառված են տվյալ հասցեում \_\_\_\_\_ (ընտանիքի անդամների թիվը և նրանց հերթական համարը ըստ աղյուսակի)
- սա իմ փաստացի բնակության վայրն է, սակայն հաշվառված եմ այլ վայրում \_\_\_\_\_ (ընտանիքի անդամների թիվը և նրանց հերթական համարը ըստ աղյուսակի)
- չունեմ հաշվառում \_\_\_\_\_ (ընտանիքի անդամների թիվը և նրանց հերթական համարը ըստ աղյուսակի)

4. Բնակարանային պայմաններ

- աղետի հետևանքով տրամադրված տնակ
- ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ
- հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ
- սեփական առանձնատուն
- բնակարան բազմաբնակարան շենքում
- այլ պայմաններ \_\_\_\_\_

5. Ընտանիքի անդամներից որևէ մեկը զբաղվում է անասնապահությամբ.

- ԱՅՈ (նշել տնօրինած անասնատեսակները և դրանց քանակը)
  - կով \_\_\_ հատ
  - այլ սեռահասակային տավար \_\_\_ հատ
  - խոզամայր \_\_\_ հատ
  - այլ սեռահասակային խմբերի խոզեր \_\_\_ հատ
  - ոչխար, այծ \_\_\_ հատ
  - հավ \_\_\_ հատ
  - բադ, սագ \_\_\_ հատ
  - ջայլամ \_\_\_ հատ
  - հնդկահավ \_\_\_ հատ
  - մեղվաընտանիք \_\_\_ հատ

ՈՉ

կամ հողագործությամբ

այո (նշել սեփականության կամ վարձակալության իրավունքով մշակվող գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքը, հողատարածքի չափը և հողի հարկի/վարձավճարի չափը)

\_\_\_\_\_

ոչ

6. Ընտանիքի անդամներից որևէ մեկը ունի՞ սեփականության իրավունքով պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենա.

- այո \_\_\_\_\_ (նշել մակնիշը, արտադրության թիվը)
- ոչ

## 7. Կից ներկայացնում եմ՝

- Ծննդյան վկայական /ՀՀ-ից դուրս ծնված և ՀՀ-ում բնակվող երեխաների դեպքում՝ այդ պետությունում սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանք \_\_\_\_\_ հատ
- Անձը հաստատող փաստաթուղթ \_\_\_\_\_ հատ
- Մահվան վկայական/մահացած ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը \_\_\_\_\_ հատ
- ամուսնալուծության վկայական/ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ/երեխայի հայրության ճանաչման վկայական/երեխայի ծնողներից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ
- տեղեկանք ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու մասին
- տեղեկանք 12 շաբաթական և ավելի ժամկետով հղիության վերաբերյալ
- տեղեկանք աշխատավայրից՝ աշխատավարձի չափի մասին
- փաստաթուղթ 6 ամիս և ավելի Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելու (հաշվառված լինելու) մասին
- սեփական իրավունքով պատկանող ավտոմեքենայի տեխնիկական զննումը հավաստող փաստաթուղթ

9. Երաշխավորում եմ, որ ընտանեկան նպաստ նշանակելու ընթացքում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի աշխատողն իմ ընտանիքի կազմի և պայմանների ուսումնասիրման ժամանակ առանց խոջընդոտների կարող է կատարել սույնով հայտարարագրված տեղեկությունների հավաստիության ուսումնասիրություն:

10. Պարտավորվում եմ ընտանիքիս կազմի, եկամուտների և այլ փոփոխությունների դեպքում մեկամսյա ժամկետում տեղյակ պահել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, ինչպես նաև ինչպես նաև ներկայացնել հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը դիմելու ամսվան հաջորդող 12-րդ ամվա ընթացքում:

11. Համաձայն եմ, որ իմ և իմ ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ու դրան հավասարեցված միջոցների մասին իմ ներկայացրած տվյալներն ստուգվեն պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական (անձնավորված) հաշվառման բազայում առկա տվյալներով, իսկ մյուս տվյալները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ստացված տեղեկատվությամբ:

12. Տեղեկացված եմ, որ ընտանիքիս մասին ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու կամ տեղեկությունները թաքցնելու դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է, և իմ ընտանիքը վեց ամսով զրկվում է նպաստ ստանալու իրավունքից, իսկ ավելի վճարված գումարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հետ է գանձվում:

13. Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ, սակայն չներկայացված փաստաթղթերը հայտը լրացնելուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու դեպքում դիմելու օր կհամարվի հայտը լրացնելու օրը: Նշված ժամկետից հետո ներկայացնելու դեպքում դիմելու օր կհամարվի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

14. Պահանջվող փաստաթղթերի պատճենները փոստով կամ առցանց ներկայացնելու դեպքում երաշխավորում եմ, որ ներկայացված են փաստաթղթերի իրական բնօրինակների պատճենները: Գիտակցում եմ, որ փաստաթղթերի կեղծումը քրեորեն պատժելի է:

15. Չեմ առարկում, որ իմ անունն ու ազգանունը հրապարակվեն նպաստառուների ցուցակում:

Սույն հայտի առաջին օրինակը պահվում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնում, իսկ ինքնապատճենահանված օրինակը՝ քաղաքացու մոտ:

**Ընտանիքի չափահաս անդամների համաձայնությունը**

№	Ազգանունը, ը/կ անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Ազգակցական կապը	Համաձայն եմ հայտում ներառված տվյալների հետ (ստորագրությունը)
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				

**Դիմող՝** \_\_\_\_\_ (ազգանունը, անունը, հայրանունը) \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_ 20\_\_ թ.

**Գործակալության աշխատող<sup>8</sup>** \_\_\_\_\_ (ազգանունը, անունը, հայրանունը) \_\_\_\_\_ (ստորագրությունը)

<sup>8</sup> Գործակալության աշխատողը ստորագրում է փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում:



Հայտի քննարկումը սկսելու ամսաթիվը

\_\_\_\_\_ 20\_\_ թ.

25) Հանել Հավելված 1-ը Ձև 2-ը:

1.2. Որոշման Հավելված 2-ով հաստատված «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգ»-ում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Նպաստ նշանակելու համար ծնողը իր փաստացի բնակության վայրի գործակալություն է ներկայացնում դիմում՝ համաձայն ձև N 1Ա-ի, պահանջվող փաստաթղթերի բնօրինակների հետ միասին: Գործակալության աշխատակիցը պատճենահանում կամ տեսաներածում է ներկայացված փաստաթղթերի բնօրինակները: Դիմողը կարող է նաև ուղարկել հայտը կից պահանջվող փաստաթղթերի պատճենների հետ միասին փոստով կամ առցանց՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ինտերնետային կայքում տեղադրված դիմումի ձևը լրացնելու և պահանջվող փաստաթղթերը ներբեռնելու միջոցով:».

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գործակալության աշխատակիցը հայտը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտում հայտարարագրված բնակության վայրի և այնտեղ բնակվող անձանց մասին տեղեկատվությունը՝ օգտվելով բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայից:».

3) 5-րդ կետից հանել «ներկայացված փաստաթղթերը համեմատում է բնօրինակների հետ» բառերը.

4) 8-րդ կետի առաջին նախադասությունում «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

5) 9-րդ կետում «1-օրյա ժամկետում» բառը փոխարինել «1 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

6) 25-րդ կետի առաջին նախադասությունում «երեք օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով և երկրորդ նախադասությունում «երկու օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

7) 26-րդ կետում «6 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «4 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

8) Ձև 1Ա-ով սահմանված դիմումից հանել «Սոցիալական քարտի համարը» և «Սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը» բառերը, ինչպես նաև դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկից հանել բոլոր «պատճենը»

բառերը և «Տեղեկանք ռազմաուսումնական հաստատությունում սովորելու մասին» բառերը:

- 1.3. Որոշման Հավելված 3-ով սահմանված «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման կարգ»-ում
  - 1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
  - 2) «3. Նպաստ նշանակելու համար ծնողը իր փաստացի բնակության վայրի գործակալություն է ներկայացնում դիմում՝ համաձայն ձև N 1Ա-ի, պահանջվող փաստաթղթերի բնօրինակների հետ միասին: Գործակալության աշխատակիցը պատճենահանում կամ տեսաներածում է ներկայացված փաստաթղթերի բնօրինակները: Դիմողը կարող է նաև ուղարկել հայտը կից պահանջվող փաստաթղթերի պատճենների հետ միասին փոստով կամ առցանց՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի ինտերնետային կայքում տեղադրված դիմումի ձևը լրացնելու և պահանջվող փաստաթղթերը ներբեռնելու միջոցով:».
  - 3) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«4. Գործակալության աշխատակիցը հայտը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտում հայտարարագրված բնակության վայրի և այնտեղ բնակվող անձանց մասին տեղեկատվությունը՝ օգտվելով բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազայից:».
  - 4) 5-րդ կետից հանել «ներկայացված փաստաթղթերը համեմատում է բնօրինակների հետ» բառերը.
  - 5) 8-րդ կետի առաջին նախադասությունում «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 6) 9-րդ կետում «1-օրյա» բառը փոխարինել «1 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 7) 10-րդ կետում «15 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 8) 25-րդ կետի առաջին նախադասությունում «երեք օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 9) 34-րդ կետի առաջին նախադասությունում «երեք օրացուցային օրվա» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա» բառերով, իսկ երկրորդ նախադասությունում «երկու օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 10) 35-րդ կետում «6 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «4 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.
  - 11) Ձև 1Բ-ով սահմանված դիմումի ձևից հանել «Սոցիալական ապահովության քարտի համարը» և «Սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին

տեղեկանքի համարը» բառերը, ինչպես նաև դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի 1-ին կետից հանել «պատճենը» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ՝

Տիգրան Սարգսյան